ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

« 6 » Հունիսի 2018 թ. ԹԻՎ 56

# ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N1066-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված կարգի 5-րդ և 6-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի մի խումբ բնակիչների դիմումները.*

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքում բարձրարժեք հողատեսքերը փոխադրել ցածրարժեք հողատեսքերի՝ համաձայն հավելվածի:*
2. *Սույն որոշումը սահմանված կարգով հինգ օրվա ընթացքում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:*
3. *Սույն որոշմամբ իրականացնել հողատեսքերի փոփոխումն սահմանված կարգով արտացոլել յուրաքանչյուր տարվա համար կազմվող համայնքի հողային հաշվեկշռում:*
4. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2018 թ. Հունիսի 06,
հ.Բամբակաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

# ՈՐՈՇՈՒՄ

« 18 » Հունիսի 2018թ. ԹԻՎ 57

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 2018 թվականի հունիսի 17-ի տեղացած կարկուտից տուժած վնասի չափը ուսումնասիրելու նպատակով.

## ՈՐՈՇԵՑ

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին /Ա.Եղիազարյան/ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 10-օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2018 թ. Հունիսի 06,
գ.Բամբակաշատ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Բամբակաշատ գյուղական
համայնքի ղեկավարի
2018 թվականի հունիսի 18-ի
թիվ 57 որոշման

ԿԱԶՄ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | | |
|---|---|---|
| 1. Հանձնաժողովի նախագահ` | համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար` | Ս. Մարտիրոսյան |
| հանձնաժողովի անդամներ` | համայնքապետարանի առաջատար մասնագետ` | Ռ. Ավետիսյան |
| | ավագանու անդամներ` | Է. Սարգսյան<br>Գ. Տեր-Գեղմայան |

# ԱԿՏ

18.06.2018 թ. — գ.Բամբակաշատ

Մենք՝ ներքո ստորագրողներս, Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի վարչական տարածքում 2018 թվականի հունիսի 18-ի դրությամբ գյուղատնտեսական մշակաբույսերի կարկուտից և պտտահողմից տուժած ցանկատարածություններում, ուսումնասիրող և արձանագրող հանձնաժողովի անդամներ Ս. Մարտիրոսյանս, Ռ. Ավետիսյանս, Է. Սարգսյանս և Գ. Տեր-Գեղամյանս կազմեցինք սույն ակտը հետևյալի մասին:

Համայնքի հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ վնասվել են հետևյալ մշակաբույսերը:

Կից ներկայացվում է տուժած հողի սեփականատերերի ցուցակները:

## ԿԱԶՄ
## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | | |
|---|---|---|
| 1. Հանձնաժողովի նախագահ՝ | համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար՝ | Ս. Մարտիրոսյան |
| հանձնաժողովի անդամներ՝ | համայնքապետարանի առաջատար մասնագետ՝ | Ռ. Ավետիսյան |
| | ավագանու անդամներ՝ | Է. Սարգսյան |
| | | Գ. Տեր-Գեղամյան |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

« 27 » Հունիսի 2018թ. ԹԻՎ 58

<<ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>

Ղեկավարվելով <<Ազդարարման համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի 6-րդ, 7-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի 19.06.2018 թվականի 01.1/02.1/2186-18 գրության

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատի համայնքապետարանի աշխատակազմի ներքին և արտաքին ազդարարման համար պատասխանատու պաշտոնակատար նշանակել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին Ստեփան Մարտիրոսյանին /հեռ. 093-38-43-44, էլ. փոստ bambakashat.armavir@mta.gov.am, Bambakashat.am/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2018 թ. Հունիսի 27,
հ.Բամբակաշատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

21 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 4

## ՍՊԱՐՏԱԿ ԵՂԻԿՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 159-րդ,161-րդ և 164-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N1384-Ն որոշմամբ սահմանված ցանկի առաջին մասով և հիմք ընդունելով Սպարտակ Եղիկյանի 2018 թվականի հունիսի 18-ի դիմումը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի համայնքապետի տեղակալ Սպարտակ Եղիակյանին 2018 թվականի հունիսի 21-ից տրամադրել 2017 թվականի ամենամյա չօգտագործված և 2018 թվականի ամենամյա արձակուրդները 48 օր տևողությամբ /40 օր նվազագույն, 8 օր լրացուցիչ/:

2. Սպարտակ Եղիկյանին աշխատանքի մեջ համարել 2018 թվականի օգոստոսի 29-ից:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2018թ. Հունիսի 21,
գ.Բամբակաշատ